

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության և Վրաստանի արդարադատության նախարարության միջև համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը և Վրաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը, այսուհետ՝ Կողմեր,

անհրաժեշտ համարելով Կողմերի միջև համագործակցությունը,

հայ և վրացի իրավաբանների միջև փոխըմբռնման և բարեկամական հարաբերությունների ամրապնդման նպատակով,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Կողմերը համագործակցություն կիրականացնեն հետևյալ հիմնական ուղղություններով.

1) իրավաբանական գիտության և պրակտիկայի տարբեր խնդիրներով երկկողմ սիմպոզիումների, խորհրդաժողովների և սեմինարների կազմակերպում,

2) օրենսդրության և իրավական կառույցների մասին տեղեկության փոխանակում,

3) միմյանց արդարադատության մարմինների և հիմնարկների կազմակերպման և գործունեության հետ ծանոթանալու համար Կողմերի պատվիրակությունների փոխանակում,

4) իրավաբանական կադրերի պատրաստման, մասնագետների փոխադարձ փոխանակման գործում աջակցություն,

5) Կողմերի արդարադատության մարմինների և հիմնարկների միջև գործընկերային կապերի հաստատում,

6) օրինագծերի իրավական փորձաքննության համար մասնագետների խմբերի ստեղծում հավասարության սկզբունքով,

7) արդարադատության ազգային համակարգերի իրազեկման բնագավառի մասնագետների փոխանակում:

Հոդված 2

Սույն Համաձայնագրի շրջանակներում Կողմերը կարող են ստեղծել փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող համատեղ ծրագրերի մշակման հանձնաժողովներ:

Հոդված 3

Սույն Համաձայնագրից բխող պարտականությունների կատարումն ապահովելու նպատակով Կողմերն ամեն տարի կհամաձայնեցնեն հաջորդ տարվա համագործակցության կոնկրետ ծրագրերը՝ ելնելով համապատասխան ֆինանսական հնարավորություններից: Այդ ծրագրերը ուժի մեջ կմտնեն Կողմերի համաձայնությամբ կամ ծրագրերով նախատեսված ժամկետներում:

Համագործակցության գծով համատեղ միջոցառումները ֆինանսավորելիս Կողմերը կելնեն այն սկզբունքից, համաձայն որի դրանց կազմակերպման և Կողմերի պատվիրակությունների կեցության ծախսերը, ինչպես նաև հնարավոր բժշկական ծախսերը կրում է ընդունող Կողմը, իսկ մեկնելու և հետդարձի տրանսպորտային ծախսերը՝ ուղարկող Կողմը:

Հոդված 4

Սույն Համաձայնագիրը կարող է փոփոխվել և լրացվել գրավոր՝ Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

Բոլոր փոփոխությունները և լրացումները ձևակերպվում են առանձին արձանագրություններով, որոնք սույն Համաձայնագրի անբաժանելի մասն են և ուժի մեջ են մտնում սույն Համաձայնագրի 5-րդ հոդվածով նախատեսված կարգով:

Սույն Համաձայնագրի գործողության ուղրտին առնչվող հարցերով Կողմերի միջև վեճերը և տարաձայնությունները կլուծվեն երկկողմ բանակցությունների և խորհրդակցությունների միջոցով:

Հոդված 5

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին վերջին ծանուցագիրը Կողմերի ստանալու օրվանից և գործում է անորոշ ժամկետով: Այն կարող է դադարեցվել Կողմերից մեկի կողմից և իր գործողությունը դադարեցնում է դադարեցնելու մասին գրավոր հաղորդումը մյուս Կողմի ստանալու օրվանից վեց ամիսը լրանալուց հետո:

Կատարված է 2001 թվականի հոկտեմբերի 23-ին, Երևան քաղաքում, երկու օրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, վրացերեն և ռուսերեն, ընդ որում՝ բոլոր տեքստերն էլ հավասարազոր են:

Սույն Համաձայնագրի դրույթները մեկնաբանելիս տարաձայնությունների դեպքում գերակայությունը տրվում է ռուսերեն տեքստին:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 04.03.2005թ.